

Գումարման տեղափոխական և գուգորդական օրենքները

Գումարման տեղափոխական օրենքը`

Գումարելիների տեղերը փոխելիս գումարը չի փոխվում:

Օրինակներ` $3+8=8+3=11$

$$118+250+82=118+82+250=200+250=450 :$$

Գումարման գուգորդական օրենքը`

Եթե երկու թվերի գումարին գումարվում է երրորդ թիվը, արդյունքը հավասար կլինի այն թվին, որը ստացվում է, եթե առաջին թվին գումարվում է երկրորդ և երրորդ թվերի գումարը:

Օրինակ`

$$(39+13)+87=39+(13+87)=139$$

Առաջադրանքներ

1. Կիրառելով գումարման տեղափոխական օրենքը հաշվել առավել հարմար եղանակով`

$$150+200+250$$

$$393+600+7+3000$$

$$796+200+4+450$$

$$38000+6550+2000$$

$$6480+224+500+20$$

$$12000+6214+8000$$

$$7480+364+500+20$$

2. Կիրառելով գումարման զուգորդական օրենքը հաշվել առավել հարմար եղանակով՝

$$189+70+30$$

$$139+14+84$$

$$1033+967+255$$

$$333+6667+1992$$

$$196+117+283$$

$$256+115+144$$

$$39+13+87$$

$$101+999+1001$$

$$57+60+40$$

3. Կիրառելով գումարման տեղափոխական և զուգորդական օրենքները հաշվել առավել հարմար եղանակով՝

$$62+12+38$$

$$64+18+36$$

$$393+8+92+107$$

$$275+8+25+92$$

$$276+9+24+91$$

$$1035+49+465+101$$

$$654+17+346+250+750$$

